

Մանուկներու Սուրբ Գիրքը կը ներկայացնէ

Նախընտրելի տղան ծառայ կը դառնայ



Written by: Edward Hughes

Illustrated by: Byron Unger; Lazarus

Translated by: Most Rev. Prof. Varant Zareh Seropian

Adapted by: M. Kerr; Sarah S.

Story of 60

www.M1914.org

Bible for Children, PO Box 3, Winnipeg, MB R3C 2G1 Canada

License: You have the right to copy or print this story, as long as you do not sell it.

Հայերէն

Armenian

Իսահակ շատ ուրախ էր: Իր տղան Յակոբը տուն դարձաւ: Թէեւ Եսաւ իբր եղբայր լաւ ընդունեց, սակայն ան երդում ըրած էր, որ օրին մէկը գայն սպաննէ: Բայց Յակոբին գաւազները ուրախ չէին, որովհետեւ Յովսէփը, իրենց սորատի եղբայրը իրենց հօրը նախընտրեալն էր:



1

Յովսէփին եղբայրները աւելի զայրացան երբ ան իր երազը պատմեց: "Իմ հատիկի խուրճը բարձր կեցած էր եւ իմ եղբօրս հաւաքեալները խոնարհուեցան իբր յարգանք" ըսաւ Յովսէփ:

Այս կը նշանակէր, թէ

Յովսէփ շատ աւելի կարեւոր պիտի ըլլայ քան իր եղբայրները:



2




Յովսէփին երկրորդ երազը, արելը, լուսինը եւ աստղերը իրեն առջեւ խոնարհեցան: Նոյնիսկ իր հայրը Յովսէփ շատ բարկացաւ իր վրայ, որ ինքզինք կը գերադասէ, իր ծնողքին եւ եղբայրներուն վրայ:

3




Օրին մէկը Յակոբ Յովսէփը դաշտ դրկեց, որ իր եղբայրները հսկեն իրենց հոտերը: Եղբայրները տեսան որ կու գայ: "Ելլենք սպաննենք այս երագողը", իրենք իրենց միևնչեւ մրմռացին: Յովսէփ չէր գիտեր, թէ ինչ վարմունք զինք կը սպասէ:

4




Ռիւպէն, անդրանիկ եղբայրը հակառակեցաւ: "Պէտք չէ արիւն թափենք", ըսաւ ան: "Նայեցէ՛ք, հոն փոս կայ: Թող որ հոն մեռնի" Ռիւպէն ծրագրեց ազատել Յովսէփը իրիկնամուտին:

5




Երբ Յովսէփ հասաւ, իր եղբայրները բռնեցին զինք եւ գունատը վերարկուն հանեցին անոր վրայէն, զոր իրենց հայրը հագցուցած էր իբրեւ նախընտրեալ որդին:

6



Ետքը զինք նետեցին սաստկալի փոսի մը մէջ:

7



Ռիւպէն ուղտերու շարան մը տեսաւ, որ կ'անցներ մօտերէն եւ դէպի Եգիպտոս կ'ուղղուէր: "Եկեք ծախենք Յովսէփը", ըսաւ Յուդա, իր եղբայրը: Համաձայնութիւնը կայացաւ:



Անոնք Յովսէփը 20 արծաթ դրամի ծախեցին:

8

Արցունքով եւ վախով լեցուն անօգնական կը դիտեր հեռացող ուղտերը, զոր զինք կը տանէին իր հողէն եւ ընտանիքէն հեռու:



9

"Ասի՞ր է Յովսէփին վերարկուն, արիւնտու է: Անապատին մէջ գտանք": Անխիղճ եղբայրները այդպէս ձգեցին, որ Յակոբ հաւատայ, որ վայրի գազան մը մեռցուցած էր նախընտրեալ որդին: Յակոբ փզկտեց իր հագուստները եւ սուգի մէջ ինկաւ: Որքէ մէկը չէր կրնար զինք մխիթարել:




10

Եգիպտոսի մէջ, Յովսէփ առանձին եւ վախի մէջ էր: Թերեւս ան իր տունը կը կարօտնար: Բայց չէր կրնար փախչիլ: Ան ծառայ դարձած էր Պետափրեսի տան մէջ, որ կարելոր եգիպտացի մըն էր: Պետափրեսի տեսաւ, որ Յովսէփ միշտ տքնաջան կ'աշխատի եւ ինք անոր կրնայ վստահիլ:




11

"Ինչ որ կ'ընես շատ լաւ կ'ըլլայ": Օրին մէկը Պետափրես ըսաւ Յովսէփին. "Աստուած հետդ է: Կ'ուզեմ, որ դուն ըլլաս իմ սպասաւորներուս մեծը եւ ամեն իմ վաճառականութեանս պատասխանատուն եւ ամեն իմ սպասաւորներուս պետը":



12

Աստուած Պետափրեսին լաւ հունձք տուաւ եւ շատ հարստութիւններ Յովսէփին համար: Հիմա Յովսէփ կարելոր մարդ էր, ան տակաւին Աստուծոյ կը վստահեր եւ ամեն սիրտով Անոր կը ծառայէր: Սակայն Յովսէփ բաղձանք մը ունէր:




13

Պետափրեսին կինը գէշ կին մըն էր: Ան Յովսէփէն պահանջեց, որ իր ամուսնոյն տեղը առնէ: Յովսէփ մերժեց: Ան մեղք չէր գործեր Աստուծոյ դէմ Պետափրեսին սխալ գործելով:




14

Երբ կինը փորձեց բռնի ուժով: Ան փախաւ: Սակայն կինը փռնեց անոր եւ առաւ անոր վերարկուն:





15

"Քու գերիդ վրաս յարձակեցաւ", գանգատեցաւ Պետափրեսին կինը: "Նայէ այս է իր վերարկուն": Պետափրես շատ զայրացաւ: Թերես ան գիտեր, որ իր կինը սուտ կը խօսի: Սակայն բան մը պիտի ըներ: Ի՞նչ կրնար ընել:




16

Պետափրես Յովսէփը բանտարկեց: Թէեւ ան անմեղ էր, Յովսէփի, ոչ բարկացած էր, ոչ ալ տխուր:



17

Թերես ան կը սորվեր, թէ որքան ալ դժուար ըլլայ եւ ուր որ ալ գտնուի, եթէ ան մեծարէ Աստուծոյ, Աստուած ալ իրեն պատիւ պիտի ըներ, նոյնիսկ բանտին մէջ:



18

Նախընտրելի տղան ծառայ կը դառնայ

Աստուծոյ խօսքէն պատմութիւն մը,
Սուրբ Գիրքը:

Կը գտնուի հետեւեալին մէջ

Ծննդոց 37, Ծննդոց 39

"Քու խօսքիդ մուտքը լոյս կը ցոլացնէ:"
Սաղմոս 119:130



Աստուած գիտէ, թէ շատ գէշ բաներ ըրած ենք, որոնք ինք մեղք կը կոչէ: Մեղքին պատիժը մահն է, սակայն Աստուած այնքան մեզ կը սիրէ, որ Իր Որդին Յիսուսը մեզի դրկեց, որպէսզի հաշին վրայ մեռնի եւ մեր մեղքերուն համար պատժուի: Ետքը Յիսուս համբարձաւ եւ դրախտ՝ իր տունը բարձրացաւ: Եթէ կը հաւատաս Յիսուսին եւ իրմէ կը պահանջես որպէսզի ներքէ քեզի քու մեղքերուդ համար, Ան կը ներէ: Ան կու գայ եւ մէջդ կը բնակի իսկ դուն յաւիտեան իր հետ:

Եթէ կ'ուզես մեղքերդ ազատիլ, հետեւեալը ըսէ Աստուծոյ: Տէր Աստուած ես կը հաւատամ, որ Յիսուս մահացաւ ինձի համար եւ հիմա Ան անգամ մը եւս կ'ապրի: Կ'աղաչեմ, որ գաս իմ կեանքիս մէջ եւ ներես բոլոր մեղքերս, որպէսզի կարենամ նոր կեանք մը ապրիլ, եւ օր մը հետոյ ըլլամ, յաւիտեան: Օգնէ ինձի որպէսզի քեզի համար ապրիմ քու որդիիդ պէս: Ամէն:

Կարդայ Սուրբ Գիրքը եւ ամէն օր Աստուծոյ հետ խօսիր:
Յովհաննու 3:16